# ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սիգիշմի 1

№ 2814-Ա « 25 » հուլիսի 2024թ.

ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևանի քաղաքապետարան հասցեագրված Ավետիս Գինոսյանի 2024 թվականի հունիսի 25-ի թիվ Դ-80933-24 դիմումի հիման վրա «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի դրույթներին համապատասխան իրականացվում է վարչարարություն:

Իրականացվող վարչարարության շրջանակներում 2024 թվականի հունիսի 25-ի թիվ Դ-80933-24 դիմումով ներկայացված պահանջի քննարկման նպատակով 2024 թվականի հուլիսի 15-ին հրավիրվել են լսումներ:

«Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի հայտնած տեղեկատվության համաձայն՝ Նոր Նորք վարչական շրջանի Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի և «Հայկական բարեգործական ընդհանուր միության Նորքի հայորդյաց տուն» պետական ոչ առևտրային կազմակերպության տարածքում քաղաքացի Ավետիս Գինոսյանին պատկանող «Mitsubishi outlander» մակնիշի 17 IY 117 հաշվառման համարանիշի ավտոմեքենայի վրա 2024 թվականի մայիսի 16-ին ուժեղ քամուց կոտրվել և ընկել է կիսաչոր բարդու՝ կենսունակ ճյուղ:

2024 թվականի հուլիսի 15-ի կայացած լսումներին մասնակցած Ավետիս Գինոսյանն ի թիվս այլ փաստարկների՝ հայտնել է, որ իր ունեցած տեղեկատվության համաձայն՝ Նորքի Հայորդաց տան տնօրենի դիմումի արդյունքում 10-15 օր առաջ համապատասխան թույլտվության հիման վրա խնդրո առարկա չորացած ծառը հատվել է:

Ավետիս Գինոսյանի հայտնած փաստերի կապակցությամբ անհրաժեշտություն է առաջացել ստանալ լրացուցիչ տեղեկատվություն, որի նպատակով թիվ Ն/40504-24 գրությամբ հարցում է ուղղվել իրավասու մարմնին, ում կողմից նշված հարցումը

հասցեագրվել է «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենին:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետի համաձայն՝ վարչական վարույթի ժամկետը կարող է երկարաձգվել, եթե փոխօգնության կարգով միջոցներ ձեռնարկելու համար անհրաժեշտ է ավելի երկար ժամանակ, քան վարչական վարույթի համար օրենքով սահմանված ժամկետի ավարտը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ պարբերության համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասի «գ» և «դ» կետերով նախատեսված դեպքերում վարչական վարույթի ժամկետը կարող է երկարաձգվել մինչև 30 օր ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով, որ փոխօգնության կարգով հայցված տեղեկատվությունը դեռևս չի ստացվել և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 47-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով.

ՈՐՈՇԵՑԻ

1. Ավետիս Գինոսյանի 2024 թվականի հունիսի 25-ի թիվ Դ-80933-24 դիմումի հիման վրա իրականացվող վարչարարության ժամկետը երկարաձգել մինչև 2024 թվականի օգոստոսի 20-ը ներառյալ:

2. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

**ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**